ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1013 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի 700-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 700-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման և որոշման հավելվածի վերնագրերում «ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ» բառերը փոխարինել «ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ» բառերով.

2) որոշման նախաբանից հետո օգտագործվող «աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության» և որոշման հավելվածի 1-ին կետի «աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը» բառերը համապատասխանաբար փոխարինել «աշխատանքի և բարեկեցության նախարարության» և «աշխատանքի և բարեկեցության նախարարությունը» բառերով.

3) որոշման հավելվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« 4. Նախարարության անվանումն է՝

1) հայերեն՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և բարեկեցության նախարարություն.

2) ռուսերեն՝ Министерство труда и благосостояния Республики Армения.

3) անգլերեն՝ Ministry of Labor and Welfare of the Republic of Armenia.

4) ֆրանսերեն՝ Ministère du Travail et du Bien-être social de la Rèpublique d'Armènie:»

4) որոշման հավելվածի 11.1-ին կետում «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին» բառերը փոխարինել «Աշխատանքի և բարեկեցության նախարարին (այսուհետ՝ նախարար)» բառերով.

5) որոշման հավելվածի 12-րդ կետում «Հայաստանի Հանրապետության նախարարը (այսուհետ՝ նախարար)» բառերը փոխարինել «նախարարը» բառով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

13.10.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ